Հովհաննես Հովհաննիսյան

Հայրիկ

Փոթորիկն անցավ. տեսնում եմ ահա
Պայծառ արևի ծագումն հրաշափառ.
Ավետյաց հրեշտակն իջավ մեզ վրա,
Եվ նոր առավոտ բաց է մեզ համար:

Երկար տանջվեցանք. որպես սև գիշեր
Խավար էր պատել մոր բիրտ սրտերին.
Վայելե՛նք նոր օր - ահա՛ ջինջ եթեր
Լցված է բուրմամբ մի եթերային:

Վարդերն ինձ այսօր ժպտում են անուշ,
Սոխակին դայլայլ հնչում է քաղցրիկ . . .
Ախ, այսինչ հույզ է, որ այսպես քնքուշ,
Շոյում է հոգիս, — հույս չնաշխարհիկ:

Մարած է սև կիրք, լռել է նախանձ.
Եղբայր — ձայնում եմ ես իմ թշնամուն . . .
Ոհ թե երկնային այս զգացումն անանց
Տեր մընար հավետ ամենուս հոգուն:

Մի անուն միայն, մի քաղցրի՛կ անուն
Թող մեզ բոլորիս շաղկապե սիրով—
Հայրիկ . . . նազելի և թովիչ հնչյուն,

Համակ անհուն սեր և համակ գորով: